

Հ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ, Թ. Ա. ՂԱՐԱԳՅՈՒԼՅԱՆ, Լեզվաբանական բառարան,
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, 316 էջ:

Համալսարանային բառարանագրությունը հարուստ է լեզվաբանական տերմինների մասնագիտական բառարաններով: Նմանօրինակ աշխատություններից հայտնի են հատկապես Մարտիրոսի Ֆրանսերեն և Ախմանովայի ռուսերեն բառարանները: Այդ տեսակետից հայերենը այն սակավաթիվ երջանիկ լեզուներից է, որն արդեն ունի իր սեփական մասնագիտական-հանրագիտական լեզվաբանական բառարանը:

Գրախոսվող բառարանի բառացանկն ընդգրկում է հայ լեզվաբանական-քերականագիտական գրականության մեջ գործածված գրեթե բոլոր տերմինները՝ սկսած Վ դ. մինչև նորագույն ժամանակները: Հեղինակները չեն սահմանափակվել բառացանկում միայն հայ լեզվաբանական գրականության մեջ գործածված տերմինների ընդգրկումով: Բառացանկում տեղ են գտել նաև ռուս և օտար լեզուների կարևոր և անհրաժեշտ տերմինները, ընդհանրապես ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ ճանաչում գտած տերմինարանությունը, ինչպես նաև աշխարհի քիչ թե շատ հայտնի լեզուների, այդ լեզուների համար գործածվող գրատեսակների անվանումները: Ընդգրկված են նաև լեզվաբանական ուղղությունների (դպրոցների), ինչպես նաև հայ բարբառների անվանումները և այլն:

Այսպիսի ծավալուն բառացանկ կազմելու համար հեղինակները նախապես կազմել են Վ դ. մինչև մեր ժամանակների 60-ական թվականների հայ լեզվաբանական-քերականագիտական գրականության համապատասխան տերմինների ու լեզվաբանական հասկացությունների արտահայտող տերմինաբանական կապակցությունների քարտարանը:

Բառարանն ամբողջությամբ կազմված է բացատրական-հանրագիտական և թարգմանական-տերմինաբանական բառարանների կազմության սկզբունքներով:

Բառարանի արժեքը պատկերացնելու համար բավական է ծանոթանալ նրա բառահոգվածի կազմությանը:

ա) Գլխաբառը, անկախ գործածության ժամանակաշրջանից, բառահոգվածում բերվում է արևելահայ գրական լեզվի ուղղագրությամբ: Աստղանիշով տրվում է գործածությունից դուրս եկած տերմինը:

բ) Գլխաբառին կից անկյունավոր փակագծերում նշվում է անցյալի (V-ից մինչև XIX դ. կեսերը) հայ լեզվաբանական-քերականագիտական գրականության մեջ հանդիպող տերմինի առաջին (ամենավաղ) գործածողի անունը: Կից տրվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարժեքները, առանձին տերմինների համար՝ նաև լատիներեն և հունարեն համազորները:

գ) Գլխաբառին կից տրված հիշյալ օտարազգի համարժեքներից հետո՝ հաջորդ տողում բերվում են բառարանում այդ գլխաբառին հղված բոլոր հայերեն տերմինները, այսինքն՝ դրանց հայերեն հոմանիշները (նույնանիշները): Այսպիսով, բառահոգվածի առաջին բաժնում տրվում են հայերեն գլխաբառ տերմինը, նրա նույնանիշները և դրանց օտարազգի (յոթ լեզուների) թարգմանական համարժեքները:

դ) Բառահոգվածի երկրորդ բաժնում արդեն տրվում է գլխաբառի հանրագիտական բացատրությունը, մասնագիտական սահմանումը կամ նկարագրությունը: Ընդ որում, բուն լեզվաբանական տերմինը սահմանվում է, որը և հաճախ հաստատվում է օրինակներով: Լեզուների անվանումներին վերաբերող բառահոգվածներում տրվում է տվյալ լեզվի բնութագրումը, նշվում նրանով խոսող ժողովրդի անունը, հանրագիտական և վիճակագրական տվյալներ են բերվում այդ ժողովրդի զբաղեցրած տարածքի, խոսողների թվի, գրի, բարբառների և այլնի մասին:

բ) Բառահոգվածի վերջում կա տեղեկատու բաժին, որտեղ թվարկվում են տվյալ գլխաբառին վերաբերող և բառարանում տեղ գտած բաղադրյալ (բառակապակցական) տերմինները: Ներկայացնելով հայ լեզվաբանական գրականության մեջ գործածված տերմինների հիմնական զանգվածը, զանազան հանձնարարականներով, հղումների և ալլելի միջոցով բառարանը, փաստորեն, առաջին անգամ հայ լեզվաբանական տերմինաբանության նորմավորման փորձ է կատարում:

Բառարանի հանրագիտական բնույթը պայմանավորված է նրանով, որ ընթերցողը կառող է անհրաժեշտ տեղեկություններ ստանալ աշխարհի լեզուների, գրատեսակների, նրանց ստեղծման ժամանակաշրջանի, օգտագործման վայրի, զարգացման փուլերի, լեզվական ընտանիքների, դրանց մեջ մտնող ճյուղերի և առանձին լեզուների վերաբերյալ:

«Լեզվաբանական բառարանը» հաջողությամբ է կատարում նաև հայ ընթերցողին ժամանակակից լեզվաբանական հիմնական ուղղություններին վերաբերող հասկացություններին և նրանց համապատասխան տերմիններին ծանոթացնելու իր պարտականությունը:

Վերջապես, բառարանում ներկայացված հայ լեզվաբանական-քերականագիտական տերմինները կարող են վստահելի աղբյուր ծառայել լեզվաբանական տերմինների կառուցվածքը, համակարգը, ինչպես նաև պատմությունն ուսումնասիրելու համար:

Նշված ընդհանուր արժանիքներից բացի՝ «Լեզվաբանական բառարանը» ուշագրավ է նաև նրանով, որ.

ա) Այն հայ լեզվաբանական-քերականագիտական տերմինաբանությունը ներկայացնում է դրեթե լիակատար ցանկով՝ սկսած V դ. մինչև մեր ժամանակների 60-ական թվականները, յուրաքանչյուր տերմինի համար նշելով նրա տարածքային ընդգրկումն ու ժամանակագրական կտրվածքը:

բ) Իր ընդգրկած տերմինների քանակով (ավելի քան 8 հազար), նրա տերմինացանկը ամենաընդարձակն է և, իբրև նաև բազմալեզու բառարան-տերմինարան, չի զիջում որևէ լեզվով լույս տեսած նմանօրինակ ոչ մի բառարանի կամ տերմինարանի:

գ) Ի տարբերություն հրապարակի վրա եղած լեզվաբանական բառարանների, այն ունի տեղեկատու բաժիններ՝ տվյալ տերմինի հնարավոր բոլոր զուգորդումների ցուցադրումով, նրա բոլոր տարբերակների խմբավորումներով:

Այսպիսով, երկարամյա քրտնաջան աշխատանքով ստեղծված «Լեզվաբանական բառարանը» բառացանկի ընտրությամբ և ծավալով, տերմինների մասնագիտական և հանրագիտական սահմանումներով ու մեկնություններով, հայերեն տերմինների թարգմանական բազմալեզվյան համապատասխանություններով՝ լեզվաբանության և բառարանագրության արդի պահանջները բավարարող առաջին և հաջող փորձն է հայ իրականության մեջ:

Բառարանը զերծ չէ նաև մասնակի թերություններից և վրիպումներից.

ա) Բառարանի կազմությունն ու խմբագրությունը, ինչպես հեղինակներն են նշում առաջաբանում, ավարտված է եղել հրատարակությունից դեռ տասը տարի առաջ: Այդ պատճառով լեզվաբանական նորագույն ուղղություններին և դպրոցներին վերաբերող նոր կամ նորաստեղծ որոշ տերմիններ տեղ չեն գտել բառարանում:

բ) Տարբեր լեզուներին վերաբերող վիճակագրական որոշ տվյալներ նույն պատճառով բառարանի հրատարակության պահին արդեն հնացել էին: Մեր կարծիքով այդ կարգի տվյալների թարմացումը (նույնիսկ հրատարակության ընթացքում), այնուամենայնիվ, պետք է մտահոգեր հեղինակներին:

դ) Բառարանի թարգմանական բաժնում (հրատարակության մեղքով) ցավալիորեն տեղ են գտել մի շարք վրիպումներ:

Նշված թերությունները չեն կարող ստվեր գցել այն ականհայտ առավելությունների վրա, որոնցով օժտված է սույն բառարանը:

ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բաճաթիքական գիտությունների գրադար